# «ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

## ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆԴ, «ՎՐԱՍՏԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

որը օբյեկտիվ, սպառիչ տեղեկատվություն է փոխանցում երկրում տեղի ունեցող իրադարձությունների մասին, եւ որը Վրաստանի հայալեզու բնակչությանը սեր ու հարգանք է ներշնչում վրաց պետության եւ վրաց ժողովրդի նկատմամբ:

Շնորհակալություն ենք հայտնում իրականացված եւ իրականացվելիք գործերի համար ու մաղթում հաջողություններ:

*ԿՈԲԱ ԿՈԲԱԼԱՁԵ*
*Վրաստանի վետերանների գործերով պետական ծառայության տնօրեն*

## 100-ԱՄՅԱ, ՍԱԿԱՅՆ ՋԱՀԵԼ ՄԵՐ «ՎՐԱՍՏԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

արդարադատության, կրթության, առեւտրի եւ այլն, հավատարիմ ծառայել Վրաստանին, վիրահայությանն ու Վրաստան-Հայաստան բարեկամական հարաբերությունների ամրապնդմանը:

Իրոք, այդպես է, եւ թերթը արդարացիորեն կարող է հպարտանալ իր կատարածով ու կատարելիքով:

Անձամբ ինձ համար «Վրաստանը» թանկ է, որովհետեւ այն առաջին պարբերականն էր, որ սկսեցի ընթերցել դեռ դպրոցում սովորելիս: Մեր ընտանիքում թերթն ընթերցվում էր բոլորի կողմից: Առանձնակի ոգեւորում էին Նինոծմինդայի (նախկին՝ Բոգդանովկայի) շրջանի տնտեսություններ եւ մարդկանց մասին հրապարակվող հոդվածները: Նույնը շարունակվում է եւ այսօր:

Տարիներ անց, առանձնապես նորանկախ Վրաստանի պայմաններում, «Վրաստանը» կարծես ընդլայնեց իր գործառույթը, բացի սովորական տեղեկատվությունից, սկսեց նյութեր հրապարակել Վրաստանի գործադիր եւ օրենսդիր իշխանությունների ընդունած որոշումների, օրենքներում կատարված փոփոխությունների վերաբերյալ, ինչը նշանակալի օգնեց մեր ժողովրդին՝ նոր իրավիճակում կողմնորոշվելու, իրենց գործը բացելու, գործարարության ուղղությունները հստակեցնելու հարցում: Այդ հանգամանքը առավել նշանակալից է, քանի որ նինոծմինդացիների որոշակի մասի համար պետական լեզվի իմացությունը դեռ որ մնում է հիմնախնդրային: Շնորհակալություն, «Վրաստան», երկարակեցություն եւ գործունեության լայն ասպարեզ քեզ: Սիրելի «վրաստանցիներ», իմ երախտիքի խոսքն եմ ցանկանում ուղղել նաեւ ձեզ՝ երջանկություն ու հաջողություններ ձեզ ու ձեր ընտանիքներին:

Շնորհավոր հոբելյանդ 100-ամյա, սակայն ջահել մեր «Վրաստան»:

*ՍԱՄՎԵԼ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ*
*Նինոծմինդայի քաղաքապետարանի ֆինանսա-բյուջետային ծառայության պետ*

ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՑ

# ԽՈԺՈՌՆԻ ԳՅՈՒՂԻ «ՄԻՍԻՈՆԵՐ ՊԵՊՊԻՆ» ՕԳՆՈՒԹՅՈՒՆ Է ԽՆԴՐՈՒՄ

*Այս խորագրով վրացական հեղինակավոր «Կվիրիս պալիտրա» («Շաբաթվա ներկապնակ») թերթն ընթացիկ տարվա օգոստոսի 9-ի համարում տպագրել է էթեր էրաձեի ստորեւ բերված նյութը:*

### ԻՆՉՊԵՍ ՓՈՔՐԻԿ ՀԱՅ ՏՂԱՆ ՎՐԱՑԵՐԵՆ ԵՐԳԵՑ

Գուցե շատերը հիշում են Մառնեուլիի մունիցիպալիտետի Խոժոռնի գյուղ Սվանեթիից եկած եւ տեղի դպրոցականներին վրացերեն դասավանդող ուսուցչուհի Լալի Մարգիանուն: Նա այդ դպրոցում, վրացերենից բացի, սեր էլ է սովորեցնում, սեր՝ հայրենիքի ու միմյանց նկատմամբ: Այդ «առարկայի» դասավանդումը նրան ոչ ոք չի հանձնարարել, սակայն, երբ տիկին Լալին Խոժոռնի եկավ, պարզվեց, որ այդտեղ ո՛չ վրացերեն գիտեին, ո՛չ էլ տեղացիներին օտար մարդիկ էին դուր գալիս: Նրանց հետ մտերմանալու համար, նա գործի դրեց ամեն միջոց: Մեկ անգամ նույնիսկ իտալական երկարագուլպա Պեպպիի հագուստով ներկայացավ դպրոց ու համընդհանուր հիացմունք առաջացրեց: Տիկին Լալին երեխաներին ողջ Վրաստանով մեկ շրջագայության տարավ, այն դեպքում, երբ նրանք գյուղից ընդհանրապես դուրս չէին եկել: Այն, ինչ ուսուցչուհին արեց յոթերորդ դասարանցի Շավարշ Ղարիբյանի համար, շատ հազվադեպ է արվում. նա կարիքավոր ընտանիքի տաղանդավոր տղայի ձեռքը բռնած, այդ տաղանդը զարգացնելու նպատակով, ամեն տեղ տանում է իր նյութական միջոցներով:



Շավարշը հիանալի ձայն ու երաժշտական լսողություն ունի, սակայն նրան ո՛չ վրացերեն են սովորեցրել, ո՛չ էլ՝ վրացական երգեր, իսկ ուսուցչուհի Լալին, ով ինքն էլ երաժիշտ չէ, Շավարշին օգնեց հաղթահարել այդ խոչընդոտն ու, առանց մասնագետի օգնության, վրացական երգ սովորեցրեց այնպես, որ երեխան դարձավ Վրաստանում հեղինակավոր մրցույթների դափնեկիր: Տիկին Լալին խոստովանում է, որ եթե Մառնեուլիում վրացական երգի կենտրոն ստեղծվի, սեփական միջոցներով կապահովի երեխայի ընդգրկվածությունն այդ դասընթացներին, բայց ոչ մի տեղ ոչինչ չկա, եւ խնդրում է երեխային մասնագիտորեն օգնել, քանի որ նա պետք է Վրաստանին, սակայն «փրկարար» առայժմ չի հայտնվել:

- ***Տիկին Լալի, ինչպե՞ս եք հայ երեխային վրացական երգ այնքան լավ սովորեցրել, որ նա դարձել է մանկական հեղինակավոր մրցույթների դափնեկիր:***

- Ես դա արել եմ ոչ թե երաժշտական իմացությամբ, այլ իմ սրտի ձայնով: Երբ եկա Խոժոռնիի դպրոց, երեխաները վրացերեն բառ անգամ չգիտեին: Հասկացա, որ իմ եւ նրանց հայրենիքի լեզուն արագ պիտի սովորեցնեմ ու գիտակցել տամ հայրենիքը սիրել այնպես, ինչպես բոլորն են սիրում: Եվ դա անելու համար դիմեցի ցանկացած միջոցի: Այդ ժամանակ հայտնաբերեցի Շավարշի հիանալի ձայնն ու երաժշտական լսողությունը: Հետագայում պարզեցի, որ նրա ընտանիքում բոլորը երգում են, բայց միայն՝ հայերեն: «Յութուբից» ներբեռնեցի վրացական երգ ու լսել տվեցի: Երեխան բացառիկ լսողություն ունի եւ մեղեդին անմիջապես յուրացրեց: Պետք էր մի քիչ ուղղել բառերը: Հետո ընկերոջս խնդրեցի՝ երեխային հեռակա կարգով պարապել: Վերջում կապ հաստատեցի մանկական երգի մրցույթների հետ, փառք Աստծո, հավատացին երեխայի տաղանդին: Շավարշի մայրիկին գրեցի, որ երեխային ուզում եմ տանել մրցույթի՝ Քութայիսի: Նա պատասխանեց, որ երեխան հիվանդ է եւ չի կարող գալ:

- ***Դա մերժո՞ւմ էր:***

- Հավանաբար, բայց այդ մասին ես չեմ ասել մրցույթի կազմակերպիչներին, օգնություն խնդրեցի դպրոցի տնօրեն Ռիմա Ղարիբյանից: Նա ասաց, որ երեխան կարիքավոր ընտանիքից է, երեւի ճանապարհածախսի գումար չունի: Ես թեթեւացած շունչ քաշեցի, միայն թե գա ինձ հետ, ես կլուծեմ ճանապարհածախսի հարցը: Ահա այսպես տարա Քութայիսի, որտեղ նա առաջին անգամ դարձավ մրցույթի դափնեկիր, հետո՝ Մառնեուլի, որտեղ եւս Շավարշը հաղթեց բավականին հեղինակավոր մանկական մրցույթում: Այստեղ հանձնաժողովի կազմում էր Նուցա Ջանելիձեն եւ, երբ լսում էր Շավարշին՝ լալիս էր: Երբ ես նրան ասացի.

- Թերեւս չգիտեք, որ այս երեխան առանց մասնագետ ուսուցչի օգնության սովորել է վրացական երգ, չնայած որ, մինչեւ յոթերորդ դասարանը վրացերեն ոչ մի բառ չի արտաբերել:- Տիկին Նուցան զարմացած աչքերով նայեց ինձ՝ ինչպե՞ս:

- Չեք էլ պատկերացնի, թե, Շավարշից բացի, ինչքան տաղանդավոր երեխաներ կան այդ գյուղում, որոնք չգիտեն Թբիլիսի տանող ճանապարհը: Դրա համար էլ օգնության կարիք ունեմ. ուզում եմ Շավարշին ճանապարհ ցույց տալ: Այս տղան Վրաստանին պետք է: Նա վրացերենին դեռեւս լավ չի տիրապետում, այդ պատճառով էլ դժվարանում է զգացմունքները լիարժեք արտահայտել, սակայն նրա աչքերում երջանկություն կա: Ուզում եմ՝ այսպես երջանիկ ապրի, որ կարողանա մեծ սեր ունենալ ու բաժանել շրջապատի մարդկանց:

*Հոդվածը հրապարակման պատրաստեց*
*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*

ԸՆԹԵՐՑՈՂԻ ԽՆԴՐԱՆՔՈՎ

# ԾԱՆՈԹԱՑԵՔ, 2021Թ. ՆՈԲԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐ ԱՐՏԵՄ ՊԱՏԱՊՈՒՏՅԱՆ

*«Վրաստան» թերթը իր հոկտեմբերի 9-ի համարում տպագրել էր հոդված, որտեղ նշվում էր, որ լիբանանահայ մոլեկուլային կենսաբան, նյարդաբան Արտեմ Պատապուտյանը (Արտեմ Փաթափության) 2021թ. բժշկության ոլորտում արժանացել է Նոբելյան մրցանակի: Նա ֆիզիոլոգիայի եւ բժշկության ոլորտի այս տարվա մրցանակը ստացել է ամերիկացի գիտնական Դեւիդ Ջուլիուսի հետ համատեղ:*

*Մեր թերթի ընթերցողներից շատերն իրենց նամակներով եւ հեռախոսազանգերով խնդրել էին ավելի մանրամասն պատմել Արտեմ Պատապուտյանի մասին: Արձագանքելով այդ նամակներին եւ բավարարելով «Վրաստան» թերթի ընթերցողների հետաքրքրությունը՝ ստորեւ ներկայացնում ենք մանրամասներ մեծ կենսաբան, նյարդաբանի մասին:*



Դեւիդ Ջուլիուս Արտեմ Պատապուտյան

ԱՄՆ-ում բնակվող Արտեմ Պատապուտյանը իր գործընկեր Դեւիդ Ջուլիուսի հետ դարձել է մրցանակի դափնեկիրներ ջերմաստիճանի եւ հպման ընկալիչների հայտնաբերման համար՝ թե ինչպես են մարդիկ ընկալում ջերմաստիճանը եւ ճնշումը նյարդային ազդակների միջոցով: Ասենք, որ Դեւիդ Ջուլիուսը Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր է:

Ընթերցողին տեղեկացնենք, որ ֆիզիոլոգիայի եւ բժշկության ոլորտում Նոբելյան մրցանակը ստեղծել է շվեդ քիմիկոս, դինամիտի ստեղծող Ալֆրեդ Նոբելը իր կտակում, որը գրել է 1895թ. նոյեմբերի 27-ին Փարիզում: Մրցանակը հանձնվում է Շվեդիայի մայրաքաղաք Ստոկհոլմում, Շվեդիայի թագավորական գիտությունների ակադեմիայում:

Արտեմը 54 տարեկան է, ծնվել է հոկտեմբերի 2-ին, Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում, գրող, թարգմանիչ, խմբագիր, թատերագիր Սարգիս Վահագնի եւ Լիբանանի մայրաքաղաքի հայկական դպրոցներից մեկի տնօրեն Հայկուհի Աճեմյանի ընտանիքում (ԱՄՆ տեղափոխվելուց հետո, Հայկուհին աշխատում է հայկական դպրոցում որպես ուսուցչուհի):

Ընտանիքում Արտեմը երրորդ երեխան էր: Նրա ավագ եղբայրը՝ Արան, համակարգչային գիտությունների դոկտոր է, գիտնական, բազմաթիվ գյուտերի հեղինակ: Քույրը՝ Հուրին, անգլերենի եւ գրականության մասնագետ է, Լիբանանում Ազգային Եղիշե Մանուկյան քոլեջի ուսուցչուհի:

Արտեմ Պատապուտյանը սովորել է Բեյրութի Հովակիմյան-Մանուկյան վարժարանում, ապա՝ տեղի ամերիկյան համալսարանում: 1986թ. մեկնել է ԱՄՆ, 1990-ին Կալիֆոռնիայի համալսարանում ստացել է բջիջների եւ զարգացման կենսաբանության բնագավառի բակալավրի աստիճան: 1996թ.-ին պաշտպանել է թեկնածուական թեզ Կալիֆոռնիայի՝ Փասադենայի տեխնոլոգիական համալսարանում: Այնուհետեւ աշխատել է Սան Ֆրանցիսկոյի Կալիֆոռնիայի համալսարանում: 2000 թվականին դարձել է Սկրիպսի հետազոտական ինստիտուտի դասախոս: 2000-2014 թթ.ստացել է մեկ այլ հետազոտական պաշտոն «Նովարտիս» հետազոտական հիմնադրամում: 2014թ.-ից հանդես է գալիս որպես հետազոտող Հորվարդ Հյուզի բժշկական համալսարանում:

Արտեմը անդամ է ԱՄՆ-ի Գիտությունների ազգային ակադեմիայի, Գիտության զարգացման աջակցության ամերիկյան ասոցիացիայի եւ Արվեստների ու գիտությունների ամերիկյան ակադեմիայի: Գիտությունների թեկնածու է, տիրապետում է անգլերենին ու հայերենին:

Նշենք նաեւ, որ Արտեմը եւ Ջուլիուսը տասնամյակներ շարունակ խոսում էին այն հայերի մասին, ովքեր արժանի են եղել, բայց չեն արժանացել Նոբելյան մրցանակի՝ աստղագետ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, ճառագայթման սարքի ստեղծող Ռայմոնդ Դամադյանը, Մենդելեեւի աղյուսակում տեղ գտած նոր տարրի՝ Օգանեսոնի հայտնագործող Յուրի Հովհաննիսյանը եւ շատ ուրիշներ:

Եվ միայն 2007թ., ԱՄՆ նախկին փոխնախագահ Ալբերտ Գորի հետ միասին Նոբելյան մրցանակի արժանացավ Կլիմայի փոփոխություններով զբաղվող փորձագետների միջկառավարական խումբը եւ առաջին հայը՝ ճանաչված մասնագետ, ամերիկահայ կլիմայագետ, 67-ամյա Տորք Սահակյանը (Դորկ Սաագյան), ով իր ծանրակշիռ նպաստը բերեց Կլիմայի փոփոխություններով զբաղվող փորձագետների միջկառավարական խմբին:

*ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ*

COVID - 19

# ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ Է ՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵԿ ԵՐՐՈՐԴԸ

*Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի տվյալներով, երկրում պատվաստման գործընթացը կտրուկ դանդաղել է, ու եթե օգոստոսին ու սեպտեմբերի սկզբին օրական կատարվում էր ավելի քան 20 000 պատվաստում, ապա նշվում է, որ հոկտեմբերին օրական կատարվել է ամենաշատը 9 000 պատվաստում:*

Նշենք, որ վիրուսի տարածումն ու բացասական հետեւանքները կանխելու նպատակով, Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը եւ առողջապահության նախարարությունը անհրաժեշտ են համարել օրական պատվաստել մինչեւ 30 000 մարդ:

Պատվաստումը Վրաստանում սկսվել է մարտի 15-ին: Մինչ օրս կատարվել է 1 920 934 պատվաստում: Առնվազն մեկ դեղաչափով պատվաստվել է 1 013 507 մարդ կամ չափահաս բնակչության 35,7 տոկոսը: Ամբողջությամբ պատվաստված է 907 106 քաղաքացի, ինչը կազմում է չափահաս բնակչության 31,8 տոկոսը:

Վրաստանում պատվաստումները կամավոր սկզբունքով են, իրականացվում են «Ֆայզեր», «Աստրազենեկա», «Սինոֆարմ» եւ «Սինովակ» պատվաստանյութերով:

# ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ, ԴԻՄԱԿՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԵԼԸ, ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻԱԿ ՈՒՂԻՆ ԵՆ

*Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի փոխտնօրեն Պաատա Իմնաձեի հավաստմամբ, կորոնավիրուսի արդեն իսկ թափ հավաքող հինգերորդ ալիքի դիմակայության եւ համավարակի հաղթահարման միակ ուղին պատվաստումն է, դիմակների պարտադիր կրելն ու տրված հանձնարարականների կատարումը:*



- Աշնան վերջն ու ձմեռը շատ ծանր կլինեն, ու չպատվաստված բնակչության շրջանում հիվանդացության ցուցանիշը բավական բարձր կլինի,- հայտարարել է Պաատա Իմնաձեն՝ նշելով, որ ամեն ինչ կախված է պատվաստված քաղաքացիների թվից, մինչդեռ այս պահին պատվաստված է բնակչության մոտ մեկ երրորդը միայն:

Պաատա Իմնաձեի խոսքով, երբ երկրում բավականաչափ պատվաստանյութեր կան, չպետք է խոսվի սահմանափակումների մասին, թեպետ սահմանափակումներն անհրաժեշտ կլինեն միայն այն դեպքում, եթե բժշկական հաստատությունները այլեւս չդիմանա բեռին:

- Բոլոր հաշվարկներով, այն սահմանափակումները, որոնք գործում էին անցած տարվա գարնանը, փրկել են երկրում առնվազն 10 հազար մարդու կյանք, բայց այսօր այլ ժամանակներ են, երկրում առկա է պատվաստանյութերի բավական մեծ քանակ,- ասել է Իմնաձեն՝ շեշտելով, որ երկիրը չի կարող կանգ առնել այն պատճառով, որ ինչ-որ մեկը չի պատվաստվել, ու չպատվաստվածներին կոչ է արել «բարի լինել եւ պատվաստվել»:

# ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՁԵ. «ՁԳՈՒՇԱՆԱՆՔ՝ ՍԿՍՎԵԼ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱԼԻՔԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Ո՞րը կլինի իմ առաջարկությունը համավարակի վատթարացման ֆոնին, ես այստեղ չեմ կարող ասել բացեիբաց, այն կքննարկի համակարգող խորհուրդը: Մենք պետք է լավ հասկանանք, որ այս համավարակը կդադարեցնի միայն պատվաստումը: Այն 40-50 երկրները, որոնք այսօր հաջողակ են, եւ որոնք ինչ-որ կերպ մեղմացրել են տարբեր տեսակի սահմանափակումներն ու աստիճանաբար վերադառնում են կյանքի սովորական ռիթմին, դրանք այն երկրներն են, որոնք պատվաստել են բնակչության 70%-ին: Եթե մենք հոգ չենք տանում ինքներս մեզ եւ միմյանց մասին, ապա այդպիսի ալիք կունենանք երկու ամիսը մեկ: Ընդգծում եմ, որ եթե հետեւենք առաջարկություններին եւ պատվաստվենք մինչ Ամանոր, մենք կփրկենք 2000 կյանք: Գալիս է այնպիսի ալիք, որ եթե համապատասխան զսպող միջոցներ չձեռնարկվեն, այս նոյեմբերին շատ դժվար կլինի: Ես դեռ նկատի ունեմ սահմանափակումների դեպքում առաջարկություններին եւ պատվաստումներին հետեւելը,- հայտարարեց Ամիրան Գամղրելիձեն:

# ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԵՂԱՉԱՓԸ՝ 50-ԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ԵՎ ԲԱՐՁՐ ՌԻՍԿԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԱՆՑ ՀԱՄԱՐ

*Միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստի ավարտից հետո, Վրաստանի առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիան հայտարարեց, որ 50 տարեկանից բարձր անձինք եւ բարձր ռիսկի մասնագիտությունների մարդիկ կարող են պատվաստվել պատվաստանյութի երրորդ դեղաչափով:*

- Խորհուրդը հավանություն է տվել երկրորդ պատվաստումից վեց ամիս անց 50 տարեկանից բարձր անձանց ուժեղացուցիչ դեղաչափերի օգտագործմանը: Նաեւ ցանկացած տարիքի այն մարդկանց համար, ովքեր ունեն քրոնիկ հիվանդություն, ինչպես նաեւ բարձր ռիսկի մասնագիտություններով, ինչպիսիք են բժշկական անձնակազմը, փակ հաստատություններում աշխատող անձինք եւ այլն,- ասաց Թամար Գաբունիան:

Մինչ այժմ Վրաստանում պատվաստումների ծրագիրը հիմնված էր ընդամենը երկու պատվաստման վրա:

# ԱՆՎՃԱՐ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ՝ ՆԱԵՎ ԳՐԻՊԻ ԴԵՄ

*Ռիսկային խմբում գտնվողները՝ մանկավարժները, 60 եւ բարձր տարիքի անձինք, բուժաշխատողները, հղիները եւ դիալիզով հիվանդները սեզոնային գրիպի դեմ կպատվաստվեն անվճար:*

Այս մասին հայտարարել է Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի վիրուսային հիվանդությունների բաժնի ղեկավար Խաթունա Զախաշվիլին:

- Բացի այդ, գրիպի դեմ անվճար կպատվաստվեն հեպատիտ C-ով եւ ՄԻԱՎ-ով հիվանդները: 60 տարեկանից բարձր յուրաքանչյուր քաղաքացի, ով ցանկանում է գրիպի դեմ պատվաստվել, կարող է այցելել պատվաստման կետեր: Նույնը վերաբերում է դիաբետ ունեցողներին: Բարձր ռիսկային գոտում աշխատող անձինք եւս գրիպի դեմ պատվաստանյութը կստանան անվճար, այդ թվում՝ ուսուցիչները, մանկապարտեզի դաստիարակները եւ բուժաշխատողները,- նշել է Զախաշվիլին:

Հիշեցնենք, որ երկրի ողջ տարածքով գրիպի դեմ պատվաստումները սկսվել են հոկտեմբերի 8-ին:

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԾ 243 ՄԻԼԻՈՆԸ




*COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում հասել է 243 312 107-ի: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 4 946 037-ը: Ապաքինվել է 220 495 996 մարդ:*

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **46 174 547** դեպք: Այստեղ մահացածների թիվը **753 747** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **34 143 236**-ի, մահացածներինը՝ **453 076**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **21 697 341**, մահացել՝ **604 764** մարդ: **Մեծ Բրիտանիայում** կորոնավիրուսով վարակվել է **8 641 221**, վարակի հետեւանքով մահացել՝ **139 146** մարդ: Մեծ Բրիտանիային հաջորդում են Ռուսաստանը, Թուրքիան, Ֆրանսիան, Իրանը, Արգենտինան ու Իսպանիան:

**Հայաստանում,** ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **288 906-ի**, մահացածներինը՝ **5 902-ի**, ապաքինվածներինը՝ **257 352-ի**:

**Ադրբեջանում** վարակվածների թիվը **509 862** է: Վարակից մահացել է **6 829,** ապաքինվել՝ **481 696** մարդ:

**Վրաստանում,** վերջին տվյալներով, վարակվել է **684 337,** մահացել՝ **9 657**, ապաքինվել՝ **624 688** մարդ:

*Հոկտեմբերի 22-ին կորոնավիրուսով վարակման **4 155** նոր դեպքերից **1 352-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 143, Իմերեթիում՝ 777, Քվեմո Քարթլիում՝ 287, Շիդա Քարթլիում՝ 306, Գուրիայում՝ 95, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 299, Կախեթիում՝ 669, Մցխեթա-Մթիանեթիում՝ 96, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 36, Սամցխե-Ջավախեթիում՝ 95:***

*Հոկտեմբերի 22-ի դրությամբ մահացել է 40 մարդ:*

## ԶԳՈՒՇԱՑԵՔ. ՎԵՐՋԻՆ ՄԵԿ ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ՄԱՀԱՑԵԼ Է 261 ՄԱՐԴ

# 180 ԴՊՐՈՑ ԵՎ ԱՎԵԼԻ ՔԱՆ 6000 ԴԱՍԱՐԱՆ ԱՆՑԵԼ ԵՆ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ

## ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՆՈՐՄԱԼ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՄԻԱՅՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ 80 ՏՈԿՈՍԻ ՊԱՏՎԱՍՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ



*Այսօրվա դրությամբ, Վրաստանի ողջ տարածքով 180 դպրոց եւ ավելի քան 600 դասարան անցել են հեռավար ուսուցման: Նման քայլի անհրաժեշտություն ծագեց, երբ կրթօջախներում արագ թեստավորման եւ ՊՇՌ ստուգման արդյունքում, ուսուցիչների, ինչպես նաեւ աշակերտների շրջանում հայտնաբերվեցին կորոնավիրուսով վարակման տագնապալի թվեր:*

Վրաստանի կրթության փոխնախարար Նունու Միցկեւիչի հայտարարությամբ, դպրոցներում անցկացվող թեստավորման արդյունքները յուրաքանչյուր ուրբաթ նորացվում են, եւ նախարարությունը իր որոշումներում ելնում է այդ նորացված տվյալներով:

Վրաստանի առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիայի հավաստմամբ, թեեւ Վրաստանում ուսուցիչների 65 տոկոսը պատվաստված է, այնուամենայնիվ, դպրոցներում վարակի տարածումը կանխելու համար անհրաժեշտ է այս ցուցանիշը հասցնել 80 տոկոսի:

Փոխնախարարի խոսքով, այս փուլում 180 դպրոց շարունակում է հեռավար ուսուցումը:

- Ընդհանուր առմամբ, ուսուցիչների պատվաստման տոկոսը հասնում է 65 տոկոսի, որոշ դպրոցներում այն ավելի բարձր է, մյուս դպրոցներում՝ համեմատաբար ցածր: Այս ցուցանիշը եւս վատ չէ, սակայն, դպրոցներում վարակի տարածումը կանխելու համար, ցանկալի է, որ պատվաստվածների թիվը գերազանցի 80 տոկոսը,- ասել է Գաբունիան:

Ինչ վերաբերում է հեռավար կրթության անցնելուն, ապա, ըստ փոխնախարարի, 180 դպրոց եւ 600 դասարան արդեն օգտվում են այս տարբերակից:

- Դպրոցների ընդհանուր թվի համեմատ, սա բարձր ցուցանիշ է: Լավ է, որ դպրոցները կարողանում են կառավարել վարակի ներքին տարածումը եւ, հետեւաբար, կարծում ենք, որ սա կլինի այն միջոցը, որը թույլ կտա մեզ դասապրոցեսը շարունակել դասասենյակային պայմաններում,- ասել է Գաբունիան:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 4-ից Վրաստանում ուսումնական գործընթացը վերսկսվել է դասարաններում ու լսարաններում:

*Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Հոկտեմբերի 19-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ժողովրդավարության հարցերով զեկուցողների խմբի ղեկավար, Եվրախորհրդում Շվեդիայի մշտական ներկայացուցիչ դեսպան Մարթեն Էհնբերգի հետ եւ նրա գլխավորած պատվիրակությանը: Պատվիրակության կազմում են ԵԽ-ում Ֆրանսիայի, Ռուսաստանի, Շվեյցարիայի, Ֆինլանդիայի, Էստոնիայի, Անդորրայի, Իսլանդիայի դեսպանները եւ ԵԽ քարտուղարության ներկայացուցիչները:*



Հանդիպմանը վարչապետը հարցուպատասխանի ձեւաչափով անդրադարձել է ԵԽ պատվիրակության անդամներին հետաքրքրող մի շարք հարցադրումների: Դրանք վերաբերում էին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված պատերազմի հետեւանքների հաղթահարմանը, հումանիտար խնդիրների կարգավորմանը, տարածաշրջանում խաղաղության եւ կայունության ապահովմանը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների շրջանակում բանակցային գործընթացի վերականգնմանը, ինչպես նաեւ Հայաստանի ժողովրդավարական զարգացմանը, կրթական բարեփոխման կարեւորությանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, օրենքի գերակայության ամրապնդմանը, ընտանեկան բռնության կանխարգելմանը, պետություն-քաղաքացիական հասարակություն համագործակցության խթանմանը, խորհրդարանական կառավարման համակարգի բարելավմանը եւ այլն:

ԵԽ նախարարների կոմիտեի ժողովրդավարության հարցերով զեկուցողների խմբի ղեկավար Մարթեն Էհնբերգը շնորհակալություն է հայտնել վարչապետ Փաշինյանին հանգամանալից անդրադարձի համար եւ նշել, որ Հայաստանի ժողովրդավարական առաջընթացի մասին վկայող աշխատանքները կներկայացվեն 2022թ. հունվարին նախատեսվող ԵԽ-Հայաստան 2019-2022 թթ. Գործողությունների ծրագրի քննարկմանը:

## «ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ՍՏԵՂԾՎԵԼ Է ԲՈՎԱՆԴԱԿԱԼԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ»

*Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը ռուս-հայկական միջտարածաշրջանային ութերորդ համաժողովի մասնակիցներին ուղղված ողջույնի խոսքում նշել է, որ երկու երկրների միջեւ ստեղծվել է բովանդակալից երկխոսություն եւ տարբեր ուղղություններով արդյունավետ համագործակցություն:*

- Ռուսաստանի եւ Հայաստանի հարաբերությունները, որոնք հիմնված են բարեկամության ու փոխադարձ հարգանքի բազմադարյա ավանդույթների վրա, կրում են դաշնակցային բնույթ: Մեր պետությունների միջեւ ստեղծվել է բովանդակալից քաղաքական երկխոսություն, տարբեր ուղղություններով արդյունավետ համագործակցություն: Ռուս-հայկական կապերի զարգացման գործում նշանակալի դեր է խաղում միջտարածաշրջանային կոոպերացիան, որը թույլ է տալիս իրականացնել փոխշահավետ նախագծերը տնտեսական, սոցիալական, ենթակառուցվածքային, հումանիտար եւ բազմաթիվ այլ ոլորտներում,- հայտարարել է ՌԴ նախագահը:

## ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՄՆ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

*Հոկտեմբերի 21-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական եւ եվրասիական հարցերով տեղակալ Քերըն Դոնֆրիդի հետ:*

Զրուցակիցները քննարկեցին տարբեր հարթակների, այդ թվում՝ Հայաստան-ԱՄՆ ռազմավարական երկխոսության (USASD) շրջանակներում ձեռնարկվելիք քայլերը:

«Կողմերն անդրադարձան նաեւ տարածաշրջանային անվտանգության հարցերին: Երկուստեք կարեւորվեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության մանդատի շրջանակներում»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Անդրադառնալով 44-օրյա պատերազմի հետեւանքով ստեղծված հումանիտար խնդիրներին՝ նախարար Միրզոյանն առաջնահերթ ընդգծեց Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների ու քաղաքացիական պատանդների հայրենադարձման հարցը:

## ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԲԱՐՁՐԱՆԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

*Հայաստանում նոյեմբեր ամսից ուսուցիչների աշխատավարձը կարող է բարձրանալ 30, 40 եւ 50 տոկոսով՝ ատեստավորման շնորհիվ: Այդ մասին կառավարության նիստի սկզբում նշեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը:*

- Այս օրերին ընթանում է մեր ռազմավարական ծրագրերից մեկի իրագործումը, որն իմ կարծիքով շրջադարձային նշանակություն պիտի ունենա Հայաստանի հետագա զարգացման գործում: Խոսքը ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացի մասին է: Այսինքն, ուսուցիչներն իրենք են ընտրում ատեստավորվել՝ վերահաստատե՞լ իրենց որակավորումը, թե՞ ոչ: Եվ այս վերահաստատման արդյունքում նրանց աշխատավարձերը՝ կախված հավաքած միավորներից, նոյեմբեր ամսից կբարձրանա 30, 40 կամ 50 տոկոսով,- ասաց Նիկոլ Փաշինյանը եւ հավելեց, որ կառավարությունը ծրագրում է նաեւ հաջորդ փուլը, որով արդեն իսկ ատեստավորված ուսուցիչների համար կիրականացվի երկրորդ ատեստավորումը՝ ավելի բարձր չափանիշներով:

- Այսինքն՝ այն ուսուցիչները, ովքեր կարողացել են իրենց աշխատավարձը 30, 40 կամ 50 տոկոսով բարձրացնել, նրանք հնարավորություն կունենան եւս մեկ անգամ արդեն իսկ բարձրացված աշխատավարձը կրկին ատեստավորման միջոցով բարձրացնել 30, 40 եւ 50 տոկոսով՝ վերահաստատելով իրենց բարձր որակավորումը: Եվ այս գործընթացը կլինի բացարձակապես կամավոր,- ասաց վարչապետը:

Նիկոլ Փաշինյանի խոսքով, այս գործընթացը կտեւի մոտ 3-4 տարի:

## ՄԱՀԱՑԵԼ Է ՎԱՆՈ ՍԻՐԱԴԵՂՅԱՆԸ



*Հոկտեմբերի 15-ին, 75 տարեկանում մահացել է Հայաստանի պետական, կուսակցական, հասարակական, գրական գործիչ Վանո Սիրադեղյանը:*

Վանո Սիրադեղյանը ծնվել է 1946 թվականին, Նոյեմբերյանի շրջանի Կոթի գյուղում: Եղել է 1990-ականների սկզբին Հայաստանի Հանրապետությունում իշխանության եկած Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) առաջնորդներից, 1990-1992 եւ 1997-2000 թվականներին ղեկավարել է կուսակցության վարչությունը, զբաղեցրել է բարձր պաշտոններ:

1992-1997 թվականներին եղել է Հայաստանի ներքին գործերի նախարարը, 1997-1998 թթ.՝ Երեւանի քաղաքապետը, գրեթե միաժամանակ՝ 1997-1999-ին, ընտրվել է Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր:

Վանո Սիրադեղյանը 1994 թվականի մայիսի 15-ի, Թբիլիսիի հայկական թատրոնում ահաբեկչական գործողությունից հետո, նշանակալի օգնություն է ցուցաբերել. Նրա նախաձեռնությամբ միջոցներ տրամադրվեց Թբիլիսիի հայկական դրամատիկական թատրոնի վերանորոգման համար:

1995 թվականին «Ամիրանի» հրատարակչության կողմից Գիվի Լուարսաբիշվիլու թարգմանությամբ, վրացերենով լույս տեսավ Վանո Սիրադեղյանի «Դուռը» գիրքը:

Վանո Սիրադեղյանի աճյունը կտեղափոխվի Հայաստան: Տեղեկությունը հայտնել է նրա կինը՝ Ռուզան Տոնոյանը:

Թե որտեղ եւ ինչի հետեւանքով է նա մահացել, հայտնի չէ:

Վանո Սիրադեղյանի հուղարկավորության կազմակերպման նպատակով ստեղծվել է կառավարական հանձնաժողով:

Սիրադեղյանի անվան հետ են կապում բազմաթիվ քրեական հանցագործությունների կազմակերպումը, ինչի համար եւ նրա նկատմամբ Հայաստանի իրավապահ մարմինները միջազգային հետախուզում էին հայտարարել:

### ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

*Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի փոխվարչապետերի համանախագահությամբ կայացել է եռակողմ աշխատանքային խմբի նիստ:*

*Հոկտեմբերի 20-ին, Մոսկվայում, Հայաստանի փոխվարչապետ Միեր Գրիգորյանը, Ռուսաստանի փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկը եւ Ադրբեջանի փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւն անցկացրել են եռակողմ աշխատանքային խմբի 8-րդ նիստը, որի ընթացքում դիտարկվել են Հարավային Կովկասի տարածաշրջանում տրանսպորտային կոմունիկացիաների վերականգնման հեռանկարները, քննարկվել է Հայաստանի վարչապետի, Ռուսաստանի նախագահի ու Ադրբեջանի նախագահի՝ 2021թ. հունվարի 11-ի հայտարարության շրջանակներում իրականացվող աշխատանքի հետագա ընթացքը:*

### ԿՐՃԱՏՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

*Հայաստանի ազգային ժողովի պետականիրավական հարցերի մշտական հանձնաժողովը հավանություն է տվել «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին, որով նախատեսվում է Հայաստանի քաղաքացիություն ստանալու դիմումների քննարկման ժամկետը, 6 ամսվա փոխարեն, սահմանել 90 աշխատանքային օր:*

*Օրինագծի ընդունման արդյունքում կապահովվի ՀՀ սահմանադրությամբ ամրագրված՝ ազգությամբ հայերի պարզեցված կարգով ՀՀ քաղաքացիություն ստանալու իրավունքի լիարժեք իրացումը:*

### ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏ՝ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ, ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԻՆ

*Հայաստանի կառավարությունը վերաբաշխում կատարեց «2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում: Այն բխում է 2021 թվականի օրացուցային պլանով նախատեսված՝ աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններին նախապատրաստվելու եւ 2021 թվականի մրցաշրջանը եզրափակելու նպատակով օլիմպիական խաղերի, աշխարհի ու Եվրոպայի առաջնությունների հաղթողներին եւ մրցանակակիրներին, ինչպես նաեւ Հայաստանի հավաքական թիմերի անդամ հանդիսացող մարզիկներին ու օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձեւերի Հայաստանի հավաքական թիմերի մարզիչներին եւ բժիշկներին (մերսող) սպորտային նպաստ հատկացնելու անհրաժեշտությունից:*

*Ըստ այդմ, այդ նպատակներով կառավարության պահուստային ֆոնդից կհատկացվի 114 մլն դրամ:*

### ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿՆ ԻՋԵԼ Է

*2021 թվականի հոկտեմբերի 20-ի դրությամբ, Սեւանա լճի մակարդակը 10 սմ պակաս է 2020 թվականի նույն օրը գրանցված նիշից՝ 2021 թվականի հոկտեմբերի 20-ին Սեւանա լիճը ծովի մակերեւույթից գտնվել է 1900մ 52սմ բարձրության վրա, նախորդ տարվա նույն օրը գրանցված 1900մ 62սմ նիշի դիմաց: Ոռոգման նպատակներով այս տարի Սեւանա լճից բաց է թողնվել 227 միլիոն 651 հազար խորանարդ մետր ջուր, իսկ Արփա-Սեւան թունելային ջրատարով, ներառյալ ստորերկրյա հոսքը, Սեւանա լիճ է հոսել 145 միլիոն 667 հազար խորանարդ մետր ջուր: Սեւանա լճից ոռոգման նպատակներով ջրբացթողումները դադարեցվել են հոկտեմբերի առաջին տասնօրյակի ընթացքում:*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈԿՏԵՄԲԵՐ



*24.10.2021 Տոն Խաչի Գյուտի*

Խաչի Գյուտը Քրիստոսի խաչափայտին նվիրված չորս տոներից է:

*26.10.2021 Սամոսատում նահատակված Սուրբ Հիպիրիքյանների հիշատակության օր*

*28.10.2021 Սեւերիանոս Սեբաստացու, Բաբելա ծերունու եւ նրա ութսունչորս աշակերտների հիշատակության օր*

*30.10.2021 Հիշատակ Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետի*

ՖՈՒՏԲՈԼ

## ՎՐԱՍՏԱՆԸ ՀԱՆԴԵՍ ԿԳԱ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ «C», ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ «B» ԽՄԲՈՒՄ

*Շվեյցարական Մոնտրյո քաղաքում դեկտեմբերի 16-ին կկայանա Ազգերի լիգայի՝ 2022/2023 մրցաշրջանի վիճակահանությունը:*

Հիշեցնենք, որ Վրաստանի հավաքականը նախորդ մրցաշարի արդյունքներով պահպանեց իր դիրքերը «C» խմբում, իսկ Հայաստանի ազգային ընտրանին, Ազգերի Լիգայի նախորդ խաղարկության «C» լիգայի իր խմբում զբաղեցնելով առաջին հորիզոնականը, այս անգամ հանդես կգա «B» լիգայում:

## ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԴԻՐՔԵՐԸ՝ ԸՍՏ ՑՈՒՑԱԴՐԱԾ ԽԱՂԻ ՈՐԱԿԻ

*Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց երկրներին հավաքականների հերթական վարկանիշային աղյուսակը, ըստ որի, Վրաստանի հավաքականն առաջադիմեց երեք հորիզոնականով եւ զբաղեցրեց 93-րդ տեղը:*

Հայաստանի թիմը պահպանեց իր դիրքը՝ զբաղեցնելով աղյուսակի 89-րդ հորիզոնականը:

Դասակարգման աղյուսակի առաջատարն անփոփոխ է՝ Բելգիան: Երկրորդ տեղում Բրազիլիան է, իսկ եռյակը եզրափակում է Ֆրանսիան: Լավագույն տասնյակում են նաեւ Իտալիան, Անգլիան, Արգենտինան, Իսպանիան, Պորտուգալիան, Մեքսիկան եւ Դանիան:

ԵՐԿՐԱՇԱՐԺ



## ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՑՆՑՈՒՄ՝ ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ

Հոկտեմբերի 21-ին, տեղական ժամանակով ժամը 13:17-ին սեյսմոլոգիական ցանցի կողմից գրանցվել է Հայաստան-Վրաստան սահմանային գոտի՝ Բավրա գյուղից 15 կմ հյուսիս-արեւելք, օջախի 10 կմ խորությամբ, 2,3 մագնիտուդով երկրաշարժ:

Էպիկենտրոնային գոտում ստորգետնյա ցնցման ուժգնությունը կազմել է 3 բալ:

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ

## ԿՐԿԻՆ ԹԵՎԱԾԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈԼՄԱՅԻ ԲՈՒՐՄՈՒՆՔԸ

*Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միության նախաձեռնությամբ, Վիրահայոց թեմի առաջնորդի օրհնությամբ եւ թեմի կենտրոնների աջակցությամբ, 2021 թվականի հոկտեմբերի 17-ին, Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու բակում, կիրակնօրյա Սուրբ պատարագին հաջորդեց հայկական տոլմայի ավանդական փառատոնը:*



Աշխարհով մեկ տարածված «Քովիդ-19» համաճարակը իր սահմանափակումներն է թելադրում հանրությանը համախմբող միջոցառումներին, որոնցից է նաեւ հայկական հարուստ մշակույթի արժեքներից մեկի՝ ազգային խոհանոցի դրսեւորմանը: Այդ պատճառով այն իրականացվեց ավելի պակաս ճոխությամբ:

Հավարտ կիրակնօրյա Սուրբ պատարագի, եկեղեցու բակում շարված սեղաններին տեղ գտան թբիլիսահայ տիկնանց պատրաստած տոլմայով կաթսաները, որոնց ախորժալի բուրմունքը տարածվել էր ողջ Հավլաբար թաղամասում՝ մարդականց տրամադրելով տոլմայի հյուրասիրության:

Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը, ողջունելով ավանդական տոլմայի փառատոնը, բարձր գնահատեց հայ մշակույթն իր բոլոր դրսեւորումներով Վրաստանում, քաղաքամայր Թբիլիսիում պահպանելու որդեգրած միտումը:

Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միության նախագահ Սուսաննա Խաչատրյանը, բացելով փառատոնը, խոսեց ավանդույթը պահպանելու անհրաժեշտության մասին եւ արժեւորեց հայ մարդու ինքնության հետ առնչվող ազգային կերակրատեսակները, նման միջոցառումների օգնությամբ սերունդներին փոխանցելու կարեւորությունը:

Ներկաները համտեսելով տոլման՝ բարձր գնահատեցին կանանց կողմից սիրով, ջերմությամբ եւ վարպետությամբ պատրաստած այս ճաշատեսակի համային հատկանիշները:

Հայկական տոլմայի փառատոնին ներկա էին Վրաստանում ՀՀ դեսպանության դիվանագետներ, թբիլիսահայ հասարակայնության ներկայացուցիչներ, հավատացյալներ:

*ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ*

«ԵՎՐԱՏԵՍԻԼ»

## ՎՐԱՍՏԱՆՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՄԱՍՆԱԿՑԵՆ ԵՐԳԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ



*41 երկրների ներկայացուցիչներ կմասնակցեն երգի միջազգային մրցույթին՝ «Եվրատեսիլ»-ին, որը տեղի կունենա եկող տարվա մայիսին, Իտալիայի Թուրին քաղաքում: Մասնակիցների թվում են նաեւ Վրաստանն ու Հայաստանը: Այդ մասին հայտնել է միջոցառման կազմակերպիչը՝ Եվրոպայի հեռարձակողների միությունը (ԵՀՄ):*

Թուրինը «Եվրատեսիլ» երգի 66-րդ միջազգային մրցույթը կանցկացնի 2022 թվականին: Մրցույթի կիսաեզրափակիչները տեղի կունենան մայիսի 10-ին եւ 12-ին, եզրափակիչը՝ մայիսի 14-ին, PalaOlimpico արենայում: Իտալիան մրցույթի անցկացման իրավունքն ստացել է 2021 թվականի մայիսին Ռոտերդամում Zitti e Buoni երգով Maneskin խմբի հաղթանակից հետո: Ավելի վաղ, մրցույթն Իտալիայում ընդունել են Նեապոլը (1965 թվական) եւ Հռոմը (1991 թվական):



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Հին հունացի կույր գրող: 5.Վրաց կոմպոզիտոր: 9.Բուժել, դեղ ու դարման անել: 11.Թերեւս, հավանական է: 12.Ետադաս կապ: 13.Իտալական ծագումով, բելգիացի երգիչ, երգահան, դերասան: 15.Ջ.Վերդիի օպերաներից: 17.Վրաց երգչուհի ... Բրեգվաձե: 19.Վառ գույն: 20.Անցած օրը: 21.Ժխտական նախածանց: 22.Ծիրանի տեսակ: 24....անիշ, ...աբան: 25.Վրաց թագուհի: 28.Խթանեմ, խթանես, ...: 30.Ժայռափոր, ժայռակոփ վանք Հայաստանում: 31.Մրգի տեսակ: 33.Ճիճու, զեռուն: 34.Ածականի գերադրական աստիճանը: 36.Մրգատու ծառի տեսակ: 39.ԱՄՆ նահանգներից: 40.Լարային երաժշտական գործիք: 41.Վե..., Դա..., տ...: 42.Ռուսական բիլինայի հերոս: 44.Թիվ, նիշ: 46.Միավորված ազգերի կազմակերպություն (հապավված): 49.Միանիշ թիվ: 51.Սատանա: 53.Գազանի բերան: 54.Սահմանային անցակետ՝ Ստեփանծմինդա-...: 55.Արեգակնային համակարգի մոլորակ: 56.Ամերիկահայ երգչուհի: 57.Առանց հետքի: 59.Անձնական դերանուն: 60.Կուբայի մայրաքաղաքը: 61.Հունական այբուբենի տառ: 62.Երգչուհի, Եվրատեսիլի մասնակից ... Մուկուչյան:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Գետ Հայաստանում: 3.Օրվա մաս: 4.Անապատային քամի: 5.Հ.Այվազովսկու կտավներից՝ «...ի կիրճը»: 6.Քաղաք Վրաստանում: 7.Հովհ.Թումանյանի հեքիաթներից՝ «... ծաղիկը»: 8.Վրացական ֆիլմ: 10.Օդի շարժումը: 14.Միջնադարի իտալացի բանաստեղծ: 16.Հանդ, տան մոտիկ գտնվող հողամաս: 18.Մորմ: 19.Հովհ.Թումանյանի լեգենդներից: 22.Փողոց Թբիլիսիում: 23.Հրազդան քաղաքը հնում: 24.Դերանվան տեսակ: 26.... առ Աստված: 27.Նար-Դոսի հերոսուհի: 29.Բանկային համակարգ: 30.Բաբելոնական արքա: 32.Պաշտպանիչ ..., շնչա...: 35.Թատրոնի, կինոյի, թանգարանի միքանիհանգամյա տոմս: 37.Գրական ստեղծագործության տեսակ: 38.Իգական անուն: 45.Ճոխ, լիքը, շատ: 47.Հայկական գինեգործության կենտրոններից: 48.Կաթնամթերք: 50.Փողոց Թբիլիսիում, մետրոյի «Դրմաղելե» կայարանի մոտակայքում: 52.Ցավ, մորմոք: 58.Ջրային փոխադրամիջոց:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 4.Աճառյան: 11.Ֆրեզեր: 12.Շապիտո: 13.Լյումեն: 14.Պլանկ: 15.Դազգահ: 19.Արգիշտի: 23.Ակրոբատ: 25.Կաղկանձ: 27.Վերարկու: 28.Եվտերպա: 29.Լիլիպուտ: 31.Սալամբո: 37.Քվորում: 38.Բրամս: 40.Աքսիոմ: 41.Ուժանակ: 42.Դինամո: 43.Օգոստոս:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Աֆալինա: 2.Ռեբուս: 3.Հեգել: 5.Ճարպ: 6.Ռոդարի: 7.Ածիկ: 8.Ռամազ: 9.Դինգո: 10.Խոտհունձ: 16.Պատվաստ: 17.Վիկուլով: 18.Տոտեմ: 20.Գուրուլ: 21.Շերամ: 22.Ակտիվ: 24.Կավ: 26.Նյու: 28.Երեքնուկ: 30.Տրոմբոն: 32.Արամիս: 33.Սոկար: 34.Գուցաեւ: 35.Օքսիդ: 36.Շիրազ: 38.Բուրգ: 39.Սարո:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445